ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ **ԽԱՉԻԿ** ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

06 փետրվարի 2014թ.

ԶԵԿ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1.Ձմռան ամիսներին իրականացվել է ճանապարհների մաքրման աշխատանքներ

2. Հանդամիջյան ճանապարհների մաքրում ճանապարհների փոսալցում

3. Իրականացվել է աղբահանություն ընդամենը ծախսը կազմել է 598 հազ. դրամ

4. Ապահովվել է Գյուղամիջյան տարածքի մաքրությունը

5. Ձեռք են բերվել փողոցային լուսավորության հարմարություններ, գյուղամիջյան տարածքում տեղակայվել եմ 3 լույսեր

6. Վերանորոգվել են Մշակույթի տան նստարանները.- 458 700դրամ

7. Ձեռք է բերվել Երաժշտական սարքավորումներ 500 հազ դրամ

8. Ձեռք է բերվել նոր թաղամասի հատակագիծը՝ 500 հազ. դրամ

9. 110 հազ. դրամ փոխանցվել է հողի ագրոքիմիական հետազոտության համար

10. Կարողացել ենք վերանորոգել մշակույթի տան Ճեմասրահը, փոխել ենք դուռը

12. Խմելու ջրի 3 կապտաժների վրա կատարվել են վերանորոգման շինարարական աշխատանքներ

13. Շարունակվում է Բնակարանաշինությունը, որը գյուղի համար ունի ռազմավարական նշանակություն՝ կառուցվում են 12 նոր բնակելի առանձնատներ

14.Կազմակերպվել են ՀՀ տոների և հիշատակի օրերի բոլոր մշակութային միջոցառումները. Շարունակվում է մշակութային փոխանակության միջոցառումները <<Ջափար 20>> միջազգային կազմակերպության հետ,

15. Տարվա ընթացքում ակտիվ գործել է <<Ռեսուրս կենտրոնը >> - երեխաների համար կազմակերպվել է համակարգչային ծրագրերի և անգլերեն լեզվի ուսուցման անվճար դասեր

Աղետների ռիսկերի նվազեցման Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են 5 սեմինարներ:

16. Սոցիալական ոլորտում շարունակում ենք դրամական օգնությունների տրամադրում՝

Ծնունդի դեպքում 50 000դրամ,Մահվան դեպքերում 40 000դրամ

17. Ներկրվել և բաշխվել է ,8տ Դիզ վառելիքի , 20տ ազոտական պարարտանյութ, 10տ ցորենի սերմացու. մկնանման կրծողների դեմ պայքարի համար պատրաստվել և բաշխվել է մկնդեղով գրավչանյութ

18 . Ուշադրության կենտրոնում ենք պահում խմելու ջրի մատակարարումը

Վերանորոգման աշխատանքներ ենք կատարել նաև կոյուղագծի վրա

19. Շարունակվում է <<Գնիշիկ>> բնապահպանական ծրագիրը, որի շրջանակներում բաժանվել են տնկիներ, կատարել ենք ծառատունկ

20. Կազմակերպվել է նաև խաղողի բերքի մթերման աշխատանքներ

21. Բյուջեի միջոցներով գնել ենք ծառայողական ավտոմեքենա և համակարգչային տեխնիկա:

23. 2014թվականի սեպտեմբերից համայքի գյուղապետարանում ներդրվել է Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգ.

24. 2014թ հոկտեմբերի 12 –ին մենք կարողացանք իրականություն դարձնել << Խաչիկ համայնքի օր >> տոնակատարությունը. Մենք նպատակ ունենք մշակութային ակտիվ միջոցառումներով համայնքում ստեղծել միասնական մտածողության մթնոլորտ, որը լուրջ քայլ կլինի համայնքի կայացման գործում:

Զեկուցման շուրջ ելույթ ունեցան Ս. Թադևոսյանը, Ֆ. Աբրահամյանը, Ս.Սարգսյանը, Վ. Գրիգորյանը որոնք անդրադարձան ոռոգման, խմելու ջրի բաշխման, կոյուղու ջրերի հեռացման, բնակարանային հիմնախնդիրներին:

Հարցերի պատասխաններով և պարզաբանումներով հանդես եկան համայնքի ղեկավարը և աշխատակազմի անդամները: Եղավ առաջարկ՝ սահմանափակել հարցերը և հաշվետվությունը համարել բավարար: Առաջարկը դրվեց քվեարկության, որի արդյունքում ժողովը որոշեց՝

1. Խաչիկի համայնքի ղեկավարի 2013թ -ի կատարված աշխատանքները համարել բավարար՝

2. Խնդրարկել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի միջոցները առավել նպատակային օգտագործել համայնքի խնդիրների լուծման համար:

ԽԱՉԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՆԵՐՍԻՍՅԱՆ